

ԱՅԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները՝ ներքոստորագրյալները, հաշվի առնելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է հասնել ավելի մեծ միասնականության անդամ պետությունների միջև, իրազեկ լինելով ահաբեկչության ակտերի աճի պատճառով ահազանցող անհանգստության մասին, ցանկանալով արդյունավետ միջոցներ իրականացնել՝ ապահովելու, որ նման գործողություններ կատարողները չխուսափեն հետապնդումից եւ դատապարտումից, համոզված լինելով, որ հանձնումը մասնավորապես այս արդյունքին հասնելու արդյունավետ միջոց է,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՅՈՒՄԱՐ 1

Պայմանավորվող պետությունների միջև հանձնման նպատակով հետեւյալ հանցագործությունները չեն կարող համարվել քաղաքական հանցագործություններ, քաղաքական հանցագործության հետ կապված հանցագործություններ կամ քաղաքական դրդապատճառներով հանցագործություններ.

ա/ "Օդանավերի բռնազավթման արգելման մասին" 1970 թ. դեկտեմբերի 16-ին Ջազայում ստորագրված կոնվենցիայով նախատեսված հանցագործությունները,

բ/ "Քաղաքացիական ավիացիայի դեմ ապօրինի գործողությունների արգելման մասին" 1971 թ. սեպտեմբերի 23-ին ստորագրված կոնվենցիայով նախատեսված հանցագործությունները,

գ/ լուրջ հանցագործություն, այդ թվում՝ հարձակում միջազգայնորեն պաշտպանվող անձանց, ներառյալ՝ դիվանագիտական գործակալների կյանքի, ֆիզիկական առողջության կամ ազատության վրա,

դ/ առեւանգումը, պատանդ վերցնելը կամ լուրջ ապօրինի կալանավորում ներառող հանցագործությունը,

ե/ հանցագործություն ռումբի, պայթուցիկի, հրթիռի, ավտոմատ հրազենի կամ ռումբային ծանրոցի օգտագործմամբ, եթե այդ օգտագործումը վտանգ է պարունակում անձանց համար,

զ/ վերոհիշյալ հանցագործությունները կատարելու փորձը կամ դրանք կատարելու փորձ կատարող անձի հետ հանցակցելու փորձը:

ՅՈՒՄԱՐ 2

1. Պայմանավորվող պետությունների միջև հանձնման նպատակով Պայմանավորվող պետությունը կարող է որոշել որպես քաղաքական հանցագործություններ, քաղաքական հանցագործության հետ կապված հանցագործություններ կամ քաղաքական դրդապատճառներով հանցագործություններ չհամարել բռնությամբ կատարված լուրջ հանցագործությունն ընդդեմ անձի կյանքի, ֆիզիկական առողջության կամ ազատության, բացառությամբ վերոհիշյալ 1-ին հոդվածով նախատեսվածների:

2. Նույնը վերաբերում է գույքի դեմ կատարված լուրջ հանցագործություններին, բացառությամբ 1-ին հոդվածով նախատեսվածների, եթե հանցագործությունը հավաքական վտանգ է առաջացրել անձանց համար:

3. Նույնը վերաբերում է վերոհիշյալ հանցագործությունները կատարելու փորձին կամ դրանք կատարելու փորձ կատարող անձի հետ հանցակցելու փորձին:

ՅՈՒՄԱՐ 3

Պայմանավորվող պետությունների միջև հանձնման վերաբերյալ բոլոր պայմանագրերի եւ համաձայնագրերի, այդ թվում "Հանձնման մասին" Եվրոպական

կոնվենցիայի դրույթները Պայմանավորվող պետությունների միջև փոփոխության են ենթարկվում այնքանով, որքանով անհամատեղելի են սույն Կոնվենցիային:

ՀՈԴՎԱԾ 4

Սույն Կոնվենցիայի նպատակներից ելնելով եւ այնքանով, որքանով 1-ին կամ 2-րդ հոդվածում նշված իրավախախտումը չի թվարկվում որպես հանձնման ենթակա հանցագործություն Պայմանավորվող պետությունների միջև կնքված հանձնման վերաբերյալ կոնվենցիայով կամ պայմանագրով, այն համարվում է որպես այդպիսին՝ ներառված սույն Կոնվենցիայում:

ՀՈԴՎԱԾ 5

Սույն Կոնվենցիայի որեւէ դրույթ չի կարող մեկնաբանվել որպես հանձնելու պարտադրանք, եթե դիմում ստացող Պետությունը լուրջ հիմքեր ունի կարծելու, որ 1-ին կամ 2-րդ հոդվածներում թվարկված հանցագործության համար հանձնման վերաբերյալ դիմումը տրվել է՝ նպատակ ունենալով անձին հետապնդել կամ պատժել նրա մաշկի գույնի, կրոնի, ազգության կամ քաղաքական համոզմունքների համար, կամ որ անձի դիրքի նկատմամբ նախապաշարմունք կարող է լինել թվարկված պատճառներից որեւէ մեկի առկայության հետեւանքով:

ՀՈԴՎԱԾ 6

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն պետք է ձեռնարկի այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ կլինեն տվյալ Պայմանավորվող պետության ենթադատությունը 1-ին հոդվածում թվարկված հանցագործությունների նկատմամբ տարածելու համար այն դեպքերում, երբ կասկածվող հանցագործը գտնվում է տվյալ Պայմանավորվող պետության տարածքում եւ այնտեղից չի հանձնվում մեկ այլ Պայմանավորվող պետության, որից ստացվել է դիմում, եւ որի ենթադատությունը հավասարապես գործում է Հայցվող պետության օրենսդրությանը զուգահեռ:

2. Սույն Կոնվենցիան չի բացառում ներպետական օրենսդրության համաձայն քրեական օրենսդրության կիրարկումը:

ՀՈԴՎԱԾ 7

Պայմանավորվող պետությունը, որի տարածքում հայտնաբերվում է 1-ին հոդվածով նախատեսվող հանցագործություն կատարելու համար կասկածվող անձ, եւ որը ստացել է 6-րդ հոդվածի 1-ին կետի պայմաններին բավարարող հանձնման վերաբերյալ դիմում, անձին չհանձնելու դեպքում պարտավոր է առանց բացառությունների եւ անհապաղ կերպով գործը ներկայացնել իր իրավասու մարմիններին՝ գործով հետապնդում իրականացնելու համար: Այդ իրավասու մարմինները պարտավոր են իրենց որոշումը կայացնել նույն եղանակով, որով որոշում կկայացվեր տվյալ Պետության օրենսդրության համաձայն լուրջ հանցագործություն համարվող գործով:

ՀՈԴՎԱԾ 8

1. Պայմանավորվող պետությունները պարտավոր են միմյանց ապահովել առավելագույնս փոխօգնություն քրեական գործերում՝ կապված 1-ին եւ 2-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների վարույթների հետ: Քրեական գործերով փոխօգնության հետ կապված բոլոր դեպքերում գործում է Հայցվող պետության օրենսդրությունը: Այնուհանդերձ, սույն օգնությունը չի կարող մերժվել միայն այն հիմքով, թե գործը վերաբերում է քաղաքական հանցագործությանը, քաղաքական հանցագործության հետ կապված հանցագործությանը կամ քաղաքական դրդապատճառներով հանցագործությանը:

2. Սույն Կոնվենցիայի որեւէ դրույթ չի կարող մեկնաբանվել որպես

փոխօգնությունն ցուցաբերելու պարտադիր պահանջ, եթե Հայցվող պետությունը լուրջ հիմքեր ունի կարծելու, որ փոխօգնության դիմումը 1-ին եւ 2-րդ հոդվածներով նախատեսվող հանցագործությունների առնչությամբ տրվել է՝ նպատակ ունենալով անձին հետապնդել կամ պատժել նրա մաշկի գույնի, կրոնի, ազգության կամ քաղաքական համոզմունքների համար, կամ որ անձի դիրքի նկատմամբ նախապաշարմունք կարող է լինել թվարկված պատճառներից մեկնումեկի առկայության հետեւանքով:

3. Պայմանավորվող պետությունների միջեւ գործող քրեական գործերով փոխօգնության վերաբերյալ բոլոր պայմանագրերի եւ համաձայնագրերի, այդ թվում "Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին" եվրոպական կոնվենցիայի դրույթները փոփոխվում են Պետությունների միջեւ այնքանով, որքանով համատեղելի չեն սույն Կոնվենցիային:

ՀՈԴՎԱԾ 9

1. Եվրոպայի խորհրդի "Հանցագործությունների հիմնախնդիրների Եվրոպական հանձնաժողովը" պետք է տեղեկացվի սույն Կոնվենցիայի կիրառման մասին:

2. Հանձնաժողովը պետք է անի այն ամենը, ինչը անհրաժեշտ է Կոնվենցիայի իրականացման արդյունքում առաջացող դժվարությունները բարեկամական կարգով լուծելու համար:

ՀՈԴՎԱԾ 10

1. Սույն Կոնվենցիայի կիրառման կամ մեկնաբանման վերաբերյալ Պայմանավորվող պետությունների միջեւ ցանկացած վեճ, որը չի կարգավորվում 9-րդ հոդվածի 2-րդ կետի շրջանակներում, պետք է ներկայացվի արբիտրաժին: Յուրաքանչյուր Կողմ կարող է նշանակել մեկական դատավոր, եւ նշանակված երկու դատավորները միասին նշանակում են երրորդ դատավորին: Եթե արբիտրաժի դիմումն ստանալուց հետո երեք ամսվա ընթացքում Կողմերից որեւէ մեկն իր դատավորին չի նշանակում, ապա վերջինս նշանակվում է մյուս Պետության դիմումի հիման վրա՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախագահի կողմից: Եթե վերջինս վեճի մասնակից Կողմերից որեւէ մեկի քաղաքացին է, ապա այս պարտականությունը կատարում է Դատարանի փոխնախագահը կամ, եթե փոխնախագահը վեճի մասնակից Կողմերից որեւէ մեկի քաղաքացին է, Դատարանի առավել ավագ դատավորը, որը վեճի մասնակից Կողմերի քաղաքացի չէ: Նույն ընթացակարգը կիրառվում է այն դեպքում, երբ երկու դատավորները համաձայնության չեն գալիս երրորդ դատավորի ընտրության հարցում:

2. Արբիտրաժային դատարանը սահմանում է իր ընթացակարգը: Արբիտրաժային դատարանի որոշումները կայացվում են ձայների մեծամասնությամբ եւ ունեն վերջնական բնույթ:

ՀՈԴՎԱԾ 11

1. Սույն Կոնվենցիան բաց կլինի Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների ստորագրման համար: Այն պետք է նաեւ վավերացվի, ընդունվի կամ հաստատվի: Վավերացման, ընդունման կամ հաստատման ակտերը պետք է ներկայացվեն ավանդապահին՝ Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին:

2. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այն վավերացնելու, ընդունելու կամ հաստատելու մասին երրորդ ակտը ավանդապահին ներկայացնելուց երեք ամիս հետո:

3. Հետագայում վավերացնող, ընդունող կամ հաստատող ստորագրող կողմ հանդիսացող Պետությունների նկատմամբ Կոնվենցիան ուժի մեջ է մտնում վավերացման, ընդունման կամ հաստատման ակտը ավանդապահին ներկայացնելուց երեք ամիս հետո:

ՀՈԴՎԱԾ 12

1. Ստորագրելու կամ վավերացման, ընդունման կամ հաստատման մասին ակտն ավանդապահին ներկայացնելու պահին ցանկացած Պետություն կարող է մատնանշել այն

տարածքը կամ տարածքները, որի/որոնց նկատմամբ գործելու է Կոնվենցիան:

2. Վավերացման, ընդունման կամ հաստատելու մասին ակտ ներկայացնելու պահին կամ դրանից հետո ցանկացած Պետություն կարող է Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ուղղվող հայտարարությամբ սույն Կոնվենցիայի գործողությունը տարածել այդ հայտարարության մեջ նշված ցանկացած այլ տարածքի կամ տարածքների նկատմամբ, որոնց միջազգային հարաբերությունների պատասխանատուն ինքն է, եւ որոնց անունից ինքը իրավասու է հանձնառություններ վերցնել:

3. Նախորդ դրույթի համաձայն տրվող հայտարարությունը կարելի է այդ հայտարարության մեջ նշվող տարածքի առնչությամբ չեղյալ հայտարարել՝ այդ մասին ծանուցում հղելով Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին: Չեղյալ հայտարարելն ուժի մեջ է մտնում անմիջապես կամ ծանուցման մեջ նշված ժամկետում:

ՀՈԴՎԱԾ 13

1. Ստորագրելու կամ վավերացման, ընդունման կամ հաստատելու մասին ակտ ներկայացնելու պահին ցանկացած Պետություն կարող է հայտարարել, որ իրեն իրավունք է վերապահում հրաժարվելու 1-ին հոդվածով նախատեսված հանցագործության կապակցությամբ հանձնում կատարելուց, եթե հանցագործությունը համարում է քաղաքական բնույթի հանցագործություն, քաղաքական բնույթի հանցագործությանն առնչվող հանցագործություն կամ քաղաքական դրդապատճառներով դրված հանցագործություն՝ պայմանով, որ պարտավորություն է ստանձնում հանցագործության բնույթը գնահատելիս լրջորեն դիտարկել հանցագործության առանձնապես լուրջ մասերը, այդ թվում, որ՝

ա/ հանցագործությունն առաջացրել է հավաքական վտանգ անձանց կյանքի,

Ֆիզիկական առողջության եւ ազատության համար, կամ

բ/ ազդել է իր դրդապատճառների հետ որեւէ կապ չունեցող անձանց վրա, կամ

գ/ հանցագործությունը կատարելիս օգտագործվել են դաժան կամ բռնի միջոցներ:

2. Ցանկացած Պետություն կարող է մասամբ կամ ամբողջությամբ չեղյալ հայտարարել նախորդ կետի համաձայն կատարված վերապահումը կամ հայտարարությունը՝ նոր հայտարարություն ուղղելով Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին. այն ուժի մեջ է մտնում վերջինիս ստանալու պահից:

3. Պետությունը, որը վերապահում է կատարել սույն հոդվածի 1-ին կետի համաձայն, չի կարող պահանջել, որ Կոնվենցիայի Կողմ որեւէ այլ Պետություն հետեւի Կոնվենցիայի 1-ին հոդվածին, սակայն կարող է պայմանական կամ մասնակի վերապահման դեպքում պահանջել, որ մյուս Պետությունը կիրառի խնդրո առարկա դրույթն այն մասով, ինչ պահանջող Պետությունն է տվյալ դրույթն ընդունել:

ՀՈԴՎԱԾ 14

Ցանկացած Պայմանավորվող պետություն կարող է չեղյալ հայտարարել Կոնվենցիան՝ այդ մասին գրավոր ծանուցելով Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին: Նման չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում Գլխավոր քարտուղարին ծանուցումը տալուց հետո անմիջապես կամ ծանուցման մեջ նշված ժամկետում:

ՀՈԴՎԱԾ 15

Սույն Կոնվենցիայի գործողությունը դադարում է այն Պայմանավորվող պետության նկատմամբ, որը դադարում է Եվրոպայի խորհրդի անդամ լինելուց կամ դուրս է գալիս Եվրոպայի խորհրդի անդամությունից:

ՀՈԴՎԱԾ 16

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը պարտավոր է Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին ծանուցել.

ա/ ստորագրող կողմերի մասին,

բ/ Կոնվենցիայի վավերացման, ընդունման կամ հաստատման ակտ ստանալու մասին,
գ/ սույն Կոնվենցիայի 11-րդ հոդվածի համաձայն Կոնվենցիայի ուժի մեջ
մտնելու օրվա մասին,
դ/ 12-րդ հոդվածի համաձայն ստացված հայտարարությունների եւ ծանուցումների
մասին,
ե/ 13-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն կատարված վերապահումների մասին,
զ/ 13-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն կատարված վերապահումը հանելու մասին,
է/ 14-րդ հոդվածի համաձայն ստացված ծանուցումների եւ հրաժարումն ուժի մեջ
մտնելու տարեթվի մասին,
ը/ 15-րդ հոդվածի համաձայն Կոնվենցիայի գործողությունը որեւէ Պետության
նկատմամբ դադարելու մասին:

Ի վկայություն վերոհիշյալի՝ ներքոստորագրյալները, համապատասխան ձեւով
լիազորված լինելով, ստորագրել են սույն Կոնվենցիան:

Կատարված է Ստրասբուրգ քաղաքում 1977 թ. հունվարի 27-ին՝ անգլերեն եւ
ֆրանսերեն երկու հավասարազոր տեքստերով, մեկ օրինակով, որոնք ի պահ են տրվում
Եվրոպայի խորհրդի արխիվներին: Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը վավերացված
պատճենները կփոխանցի Կոնվենցիան ստորագրած բոլոր պետություններին:

* Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2004
թվականի հունիսի 24-ից:

Անգլերեն տեքստի սկզբնաղբյուրը

<http://www.conventions.coe.int/>

Treaty/Commun/QueVoulezVous.asp?NT=090&CM=8&DF=6/6/2008&CL=ENG

EUROPEAN CONVENTION ON THE SUPPRESSION OF TERRORISM

Strasbourg, 27.I.1977

The member States of the Council of Europe, signatory hereto,

Considering that the aim of the Council of Europe is to achieve a
greater unity between its members;

Aware of the growing concern caused by the increase in acts of
terrorism;

Wishing to take effective measures to ensure that the perpetrators of
such acts do not escape prosecution and punishment;

Convinced that extradition is a particularly effective measure for
achieving this result,

Have agreed as follows;

Article 1

For the purposes of extradition between Contracting States, none of the
following offences shall be regarded as a political offence or as an
offence connected with a political offence or as an offence inspired by
political motives:

a an offence within the scope of the Convention for the Suppression of Unlawful Seizure of Aircraft, signed at The Hague on 16 December 1970;

b an offence within the scope of the Convention for the Suppression of Unlawful Acts against the Safety of Civil Aviation, signed at Montreal on 23 September 1971;

c a serious offence involving an attack against the life, physical integrity or liberty of internationally protected persons, including diplomatic agents;

d an offence involving kidnapping, the taking of a hostage or serious unlawful detention;

e an offence involving the use of a bomb, grenade, rocket, automatic firearm or letter or parcel bomb if this use endangers persons;

f an attempt to commit any of the foregoing offences or participation as an accomplice of a person who commits or attempts to commit such an offence.

Article 2

1 For the purpose of extradition between Contracting States, a Contracting State may decide not to regard as a political offence or as an offence connected with a political offence or as an offence inspired by political motives a serious offence involving an act of violence, other than one covered by Article 1, against the life, physical integrity or liberty of a person.

2 The same shall apply to a serious offence involving an act against property, other than one covered by Article 1, if the act created a collective danger for persons.

3 The same shall apply to an attempt to commit any of the foregoing offences or participation as an accomplice of a person who commits or attempts to commit such an offence.

Article 3

The provisions of all extradition treaties and arrangements applicable between Contracting States, including the European Convention on Extradition, are modified as between Contracting States to the extent that they are incompatible with this Convention.

Article 4

For the purpose of this Convention and to the extent that any offence mentioned in Article 1 or 2 is not listed as an extraditable offence in any extradition convention or treaty existing between Contracting States, it shall be deemed to be included as such therein.

Article 5

Nothing in this Convention shall be interpreted as imposing an obligation to extradite if the requested State has substantial grounds for believing that the request for extradition for an offence mentioned in Article 1 or 2 has been made for the purpose of prosecuting or punishing a person on account of his race, religion, nationality or political opinion, or that that person's position may be prejudiced for any of these reasons.

Article 6

1 Each Contracting State shall take such measures as may be necessary to establish its jurisdiction over an offence mentioned in Article 1 in the case where the suspected offender is present in its territory and it does not extradite him after receiving a request for extradition from a Contracting State whose jurisdiction is based on a rule of jurisdiction existing equally in the law of the requested State.

2 This Convention does not exclude any criminal jurisdiction exercised in accordance with national law.

Article 7

A Contracting State in whose territory a person suspected to have committed an offence mentioned in Article 1 is found and which has received a request for extradition under the conditions mentioned in Article 6, paragraph 1, shall, if it does not extradite that person, submit the case, without exception whatsoever and without undue delay, to its competent authorities for the purpose of prosecution. Those authorities shall take their decision in the same manner as in the case of any offence of a serious nature under the law of that State.

Article 8

1 Contracting States shall afford one another the widest measure of mutual assistance in criminal matters in connection with proceedings brought in respect of the offences mentioned in Article 1 or 2. The law of the requested State concerning mutual assistance in criminal matters shall apply in all cases. Nevertheless this assistance may not be refused on the sole ground that it concerns a political offence or an offence connected with a political offence or an offence inspired by political motives.

2 Nothing in this Convention shall be interpreted as imposing an obligation to afford mutual assistance if the requested State has substantial grounds for believing that the request for mutual assistance in respect of an offence mentioned in Article 1 or 2 has been made for the purpose of prosecuting or punishing a person on account of his race, religion, nationality or political opinion or that that person's position may be prejudiced for any of these reasons.

3 The provisions of all treaties and arrangements concerning mutual assistance in criminal matters applicable between Contracting States, including the European Convention on Mutual Assistance in Criminal Matters, are modified as between Contracting States to the extent that they are incompatible with this Convention.

Article 9

1 The European Committee on Crime Problems of the Council of Europe shall be kept informed regarding the application of this Convention.

2 It shall do whatever is needful to facilitate a friendly settlement of any difficulty which may arise out of its execution.

Article 10

1 Any dispute between Contracting States concerning the interpretation or application of this Convention, which has not been settled in the framework of Article 9, paragraph 2, shall, at the request of any Party to the dispute, be referred to arbitration. Each Party shall nominate an arbitrator and the two arbitrators shall nominate a referee. If any Party has not nominated its arbitrator within the three months following the request for arbitration, he shall be nominated at the request of the other Party by the President of the European Court of Human Rights. If the latter should be a national of one of the Parties to the dispute, this duty shall be carried out by the Vice_President of the Court or if the Vice_President is a national of one of the Parties to the dispute, by the most senior judge of the Court not being a national of one of the Parties to the dispute. The same procedure shall be observed if the arbitrators cannot agree on the choice of referee.

2 The arbitration tribunal shall lay down its own procedure. Its decisions shall be taken by majority vote. Its award shall be final.

Article 11

1 This Convention shall be open to signature by the member States of the Council of Europe. It shall be subject to ratification, acceptance or approval. Instruments of ratification, acceptance or approval shall be deposited with the Secretary General of the Council of Europe.

2 The Convention shall enter into force three months after the date of the deposit of the third instrument of ratification, acceptance or approval.

3 In respect of a signatory State ratifying, accepting or approving subsequently, the Convention shall come into force three months after the date of the deposit of its instrument of ratification, acceptance or approval.

Article 12

1 Any State may, at the time of signature or when depositing its instrument of ratification, acceptance or approval, specify the territory or territories to which this Convention shall apply.

2 Any State may, when depositing its instrument of ratification, acceptance or approval or at any later date, by declaration addressed to the Secretary General of the Council of Europe, extend this Convention to any other territory or territories specified in the declaration and for whose international relations it is responsible or on whose behalf it is authorised to give undertakings.

3 Any declaration made in pursuance of the preceding paragraph may, in respect of any territory mentioned in such declaration, be withdrawn by means of a notification addressed to the Secretary General of the Council of Europe. Such withdrawal shall take effect immediately or at such later date as may be specified in the notification.

Article 13

1 Any State may, at the time of signature or when depositing its instrument of ratification, acceptance or approval, declare that it reserves the right to refuse extradition in respect of any offence mentioned in Article 1 which it considers to be a political offence, an offence connected with a political offence or an offence inspired by political motives, provided that it undertakes to take into due consideration, when evaluating the character of the offence, any particularly serious aspects of the offence, including:

a that it created a collective danger to the life, physical integrity or liberty of persons; or

b that it affected persons foreign to the motives behind it; or

c that cruel or vicious means have been used in the commission of the offence.

2 Any State may wholly or partly withdraw a reservation it has made in accordance with the foregoing paragraph by means of a declaration addressed to the Secretary General of the Council of Europe which shall become effective as from the date of its receipt.

3 A State which has made a reservation in accordance with paragraph 1 of this article may not claim the application of Article 1 by any other State; it may, however, if its reservation is partial or conditional, claim the application of that article in so far as it has itself accepted it.

Article 14

Any Contracting State may denounce this Convention by means of a written notification addressed to the Secretary General of the Council of Europe. Any such denunciation shall take effect immediately or at such later date as may be specified in the notification.

Article 15

This Convention ceases to have effect in respect of any Contracting State which withdraws from or ceases to be a member of the Council of Europe.

Article 16

The Secretary General of the Council of Europe shall notify the member States of the Council of:

a any signature;

b any deposit of an instrument of ratification, acceptance or approval;

c any date of entry into force of this Convention in accordance with Article 11 thereof;

d any declaration or notification received in pursuance of the provisions of Article 12;

e any reservation made in pursuance of the provisions of Article 13, paragraph 1;

f the withdrawal of any reservation effected in pursuance of the provisions of Article 13, paragraph 2;

g any notification received in pursuance of Article 14 and the date on which denunciation takes effect;

h any cessation of the effects of the Convention pursuant to Article 15.

In witness whereof, the undersigned, being duly authorised thereto, have signed this Convention.

Done at Strasbourg, this 27th day of January 1977, in English and in French, both texts being equally authoritative, in a single copy which shall remain deposited in the archives of the Council of Europe. The Secretary General of the Council of Europe shall transmit certified copies to each of the signatory States.